

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴԳՎԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<<<-ԱՄ-ԲԸԱՀ-ԱՎՏՈ-15/01>>**

ք. Աշտարակ

<<06>><<Մարտի>> 2015 թ.

<< Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հովսեփյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Կատարող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է << Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար մարդատար ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների կատարումը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հալեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱԲԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության գինը կազմում է **1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով

նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների անտերը և այլն. որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև գնման պայմանագրի կնքումը, կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

7.3 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի պոլսադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության

դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.7 Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները, բաղկացած 8 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտնի մարզպետարան

«Արագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4

«Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Ը 900441041176

ՀՎՀՀ 05004247

«Արագածոտնի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար
Հ.Գևորգյան


ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
Ք.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
HSBC բանկ

Հ/հ 002-121630-001

ՀՎՀՀ 00131374

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Հովսեփյան



Տ Ե Ն Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 /դիագնոստիկա/, SU-2 /վերանորոգում/ծառայությունների

3/3	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, բախուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱՁ 2106, ՎԱՁ-21214, ԳԱՁ 31101.	Նիսան Տեաևա, Մերսեդես-Բենց C280, Պեժո պարս
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2
1	2	3	4
	<i>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</i>	Ապի արտադրության մեքենաներ	Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1	Բռնկման համակարգի ստուգում		
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում		
3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում		
4	Տարբեր ազրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում		
5	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում		
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
6	Յուղի և յուղի գտիչի փոխարինում		
7	խարճարակի հանում և տեղադրում		
8	խարճարակի վերանորոգում		
9	Օդի գտիչի փոխարինում		
10	Վառելիքի գտիչի փոխարինում		
	3. Սառեցման և արտածման համակարգ		
11	Փոկի հանում և տեղադրում		
12	Հովհարի հանում և տեղադրում		
13	Թերմոստատի փոխարինում		
14	Ջրի պոմպի փոխարինում		
15	Ընդարձակող բաքի փոխարինում		
16	Խլարարի հանում և տեղադրում		
17	Ուղիատորի փողրակի հանում և տեղադրում		
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
18	Բանվ. կան գլխ. գլանի հանում և տեղադրում		
19	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		
20	ՓՏ-ի վերանորոգում		
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
21	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		
22	Բաշխիչ տուփի վերանորոգում		
23	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում		

24	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում		
25	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում		
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
26	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում		
27	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում		
28	Կիսատնու առանցքակալի փոխարինում		
	7. Կախոց		
29	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում		
30	Անվակունդի հանում և տեղադրում		
31	Անվակունդի առանցքակալի փոխարինում		
32	Ձսպանակի հանում և տեղադրում		
33	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		
34	Ներքևի լծակի հանում և տեղադրում		
35	Ներքևի լծակի վռանների փոխարինում		
36	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում		
37	Միջին ձգանի հանում և տեղադրում		
38	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում		
39	Վերևի լծակի հանում և տեղադրում		
40	Վերևի լծակի վռանների փոխարինում		
41	Գնդե հողակալերի փոխարինում		
42	Ծայրականների հանում և տեղադրում		
43	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		
44	Առջևի կայունարարի վռանների փոխարինում		
45	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		
46	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում		
47	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		
48	Անվաբացքի կարագավորում		
	8. Ղեկային մեխանիզմ		
49	Ղեկային կալունի հանում և տեղադրում		
	9. Արգելակային համակարգ		
50	Չլխ. գլանի հանում և տեղադրում		
51	Բանվ. գլանի հանում և տեղադրում		
52	Արգելակային համակարգի օդահանում		
53	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում		
54	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում		
55	Արգելակային փողոակի փոխարինում		
56	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում		
57	Հետևի կոճղակների փոխարինում		
58	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում		
59	Հետևի արգելակային սկավառակի կամ քնթուկի հանում տեղադրում		
60	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում		
	10. Էլեկտրասարքավորում		
61	Ձափիչ սարքերի հանում և տեղադրում		
62	Սեկնարկիչի հանում և տեղադրում		
63	Սեկնարկիչի վերանորոգում		

27	Կցորդման առանցքակալ		
28	Կցորդման փողրակ		
29	ՓՏ-ի առջևի խցուկ		
30	ՓՏ-ի հետևի խցուկ		
31	ՓՏ-ի առանցքակալ		
32	ՓՏ-ի եղանիկ		
33	Համաժամիչ		
34	Սուֆտ		
35	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		
36	Տրանսմիսսիոն յուղ, <i>լիտր</i>	1	
37	ԱՓՏ յուղ, <i>լիտր</i>	1	
38	Հերմետիկ		
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
39	Էլաստիկ սուֆտ		
40	Կարդանային լիսեռի միջանկյալ հեճակ		
41	Կարդանային լիսեռի խաչուկ		
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
42	Ղիֆֆերենցիալի սատելլիտ		
43	Տանող ատամնանիվի խցուկ		
44	Տանող ատամնանիվի առանցքակալ		
45	Ղիֆֆերենցիալի առանցքակալ		
46	Կիսասռնու առանցքակալ		
47	Կիսասռնու խցուկ		
	7. Կախոց		
48	Անվակունդի խցուկ		
49	Անվակունդի ներքին առանցքակալ		
50	Անվակունդի արտաքին առանցքակալ		
51	Հարվածամեղմիչի վռան		
52	Ներքևի լծակի վռան		
53	Վերևի լծակ		
54	Վերևի լծակի վռան		
55	Առջևի կայունարարի վռան		
56	Հետևի մետաղաձող (շտանգա)		
57	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան		
58	Ծայրակալ		
59	Չզան մեջտեղի		
	8. Ղեկային մեխանիզմ		
60	Շոճանակ		
61	Շոճանակի վռան		
	9. Արգելակային համակարգ		
62	Գլխ. գլան		
63	Բանվ. գլան		
64	Արգելակային փողրակ		
65	Հետևի արգելակային թմբուկ		
66	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ		
	10. Էլեկտրասարքավորում		
67	Ստարտերի ռելե		
68	Ստարտերի ածուխ		
69	Բենդեքս		
70	Լամպ		
71	Էլեկտրական անջատիչ		

64	Բոնկման կողպեքի հանում և տեղադրում		
65	Վագբաչափի ճոպանի հանում և տեղադրում		
66	Ազդանշանի հանում և տեղադրում		
67	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում		
68	Վառոցքային լարերի հանում և տեղադրում		
69	Էլեկտրական տվիչների փոխարինում		
70	Էլեկտրական անջատիչների փոխարինում		
71	Վառոցքի մոմերի փոխարինում		
72	Կոնդիցիոների լիցքավորում		
	11. Այլ ծառայություններ		
73	Ավտոմեքենայի լվացում		
74	Անվաղողի վերանորոգում		
75	Անիվի բայանսավորում		
76	CO-գոլդան աշխատանքներ, <i>գին 1 քառ. սմ - ի համար</i>		
77	Խառատային աշխատանքներ		
78	Փականագործի աշխատանքներ		
79	Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ. համար</i>		
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		
1	Շարժիչի փական դուրս մղող		
2	Շարժիչի փական ներս մղող		
3	Շարժիչի փականի խցուկ		
4	Ծնկածև լիսեռի խցուկ առջևի		
5	Ծնկածև լիսեռի խցուկ հետևի		
6	Ատամնանիվ		
7	Հրիչ		
8	Հիդրոհրիչ		
9	Բաշմակ		
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
10	Յուղ շարժիչի հանքային, <i>1 լիտր</i>		
11	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, <i>1 լիտր</i>		
12	Յուղ շարժիչի սինթետիկ, <i>1 լիտր</i>		
13	Յուղի գտիչ		
14	Վառելանյութի գտիչ		
15	Վառելանյութի փողրակ		
16	Ջերմաստիճանային տվիչ		
17	Յուղի տվիչ		
	3. Սառեցման և արտածման համակարգ		
18	Սառեցման հեղուկ <i>1 լիտր</i>		
19	Հովովակ		
20	Ծորակ		
21	Խլարարի ներդիր		
22	Խլարարի կախոց		
23	Անուր (Խամուտ)		
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
24	Կցորդման բանվորական գլան		
25	Կցորդման գլխավոր գլան		
26	Կցորդման տարվող սկավառակ		



72	Վառողքային լարերի խուրջ		
73	Վազբաչափի ճուպան		
74	Ազդանշան		
75	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր վերանորոգման համար	գին 1դ/մ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտնի մարզպետարան
 «Արագածոտն մարզ ք.Աշտարակ
 Վ.Պետրոսյան 4
 «Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 Հ/Հ 900441041176
 ՀՎՀՀ 05004247
 «Արագածոտնի մարզպետարանի
 Աշխատակազմի ղեկավար
 Հ.Գևորգյան

ԿԱՏԱՐՈՂ

«Կարկունավտո սերվիս» ՍՊԸ
 Ք.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
 HSBC բանկ
 Հ/հ 002-121630-001
 ՀՎՀՀ 00131374
 «Կարկունավտո սերվիս» ՍՊԸ-ի
 տնօրեն Ա.Հովսեփյան



ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<դրամ



Ապրանքի		Նախատեսվում է գնել 2015թ.										Ընդամենը		
		Անվանումը	Չափման հավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
					քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը			գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	դրամ		1	283000	1	450000	1	850000	1	1000000	1	1000000	
Ընդամենը														

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Արագածոտնի մարզպետարան
 <<Արագածոտն մարզ ք.Աշտարակ
 Վ.Պետրոսյան 4
 << Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 Հ/Հ 900441041176
 ՀՎՀՀ 05004247
 << Արագածոտնի մարզպետարանի
 Աշխատակազմի ղեկավար
 Հ.Գևորգյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ
 Բ.Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
 HSBC բանկ
 Հ/հ 002-121630-001
 ՀՎՀՀ 00131374
 <<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ի
 տնօրեն Ա.Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ. ըստ ամիսների՝ ընդ որում											Հղրամ	
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ			280000	283300	366600	450000	595000	750000	850000	946700	1000000	1000000	1000000

* Վճարման ենթակա գումարները ընդերկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
 ՀՀ Արագածոտն մարզ ք. Աշտարակ
 Վ. Պետրոսյան 4

ՀՀ Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն

Հ/Հ 900441041176

ՀՎՀՀ 05004247

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
 կազմակերպչական հեղինակ



/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
 Ք. Երևան Տիգրանյան 1 փակուղի 1
 HSBC բանկ

Հ/հ 002-121630-001

ՀՎՀՀ 00131374

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի
 տնօրեն Ա. Հովսեփյան



/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

 Գտնվելու վայրը _____
 << _____

 ՀՎՀՀ _____

 Գտնվելու վայրը _____
 << _____

 ՀՎՀՀ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20____թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 20____թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս _____

_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված 'ստորև նշված աշխատանքները մատակարարումները և ծառայությունները (այսուհետև 'ծառայությունները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին 'կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «____» _____ 20____թ.-ից «____» _____ 20____թ. Ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Ծառայությունների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայություն հանձնեց

Ծառայությունը ընդունեց

 (ստորագրություն)

 (ստորագրություն)

 (Ազգանուն, Անուն)

 (Ազգանուն, Անուն)

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 /դիագնոստիկա/, SU-2 /վերանորոգում/ ծառայությունների

Ֆ/Ֆ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱԶ 2106, ՎԱԶ-21214, ԳԱԶ 31101,	Նիսան Տեանա, Մերսեդես-Բենց C280, Պեժո պարս
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2
1	2	3	4
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	ԱՊՀ արտադրության մեքենաներ	Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1	Բռնկման համակարգի ստուգում	3000	5000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3000	5000
3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3000	5000
4	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1000	1000
5	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	1500	8000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
6	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1100	3000
7	խարճարակի հանում և տեղադրում	2000	
8	խարճարակի վերանորոգում		
9	Օդի գտիչի փոխարինում	1000	1000
10	Վառելիքի գտիչի փոխարինում	1000	15000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
11	Փոկի հանում և տեղադրում	3000	3000
12	Գոլիարի հանում և տեղադրում	3000	8000
13	Թերմոստատի փոխարինում	3000	
14	Ջրի պոմպի փոխարինում	4000	
15	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	2000
16	Խլարարի հանում և տեղադրում	3000	5000
17	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2000	3000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
18	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	
19	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	9000	
20	ՓՏ-ի վերանորոգում	10000	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
21	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		
22	Բաշխիչ տուփի վերանորոգում		
23	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	

24	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	
25	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	2000	
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
26	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար բանդում և հավաքում	10000	
27	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	2000	
28	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	1000	
	7. Կախոց		
29	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում		7000
30	Անվակունդի հանում և տեղադրում	2000	
31	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3500	3500
32	Ձսպանակի հանում և տեղադրում	2000	5000
33	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000
34	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3000	10000
35	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1000	2000
36	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2000	4000
37	Սիջին ձգանի հանում և տեղադրում	2000	4000
38	ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1500	
39	Վերևի լծակի հանում և տեղադրում	2000	
40	Վերևի լծակի վռանների փոխարինում	1000	
41	Գնդե հողակապերի փոխարինում	1500	5000
42	Ծայրականների հանում և տեղադրում	1000	4000
43	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2000	5000
44	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1000	5000
45	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000
46	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	1000	
47	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		3000
48	Անվաբացքի կարագավորում	6000	12000
	8. Ղեկային մեխանիզմ		
49	Ղեկային կալունի հանում և տեղադրում	7000	20000
	9. Արգելակային համակարգ		
50	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000	8000
51	Բանվ. գլանի հանում և տեղադրում	2500	
52	Արգելակային համակարգի օդահանում	2000	3000
53	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2000	4000
54	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում		4000
55	Արգելակային փողրակի փոխարինում	2000	3000
56	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2000	4000
57	Հետևի կոճղակների փոխարինում	3000	4000
58	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2000	5000
59	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	1000	5000
60	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4000	8000
	10. Էլեկտրասարքավորում		
61	Ձափիչ սարքերի հանում և տեղադրում	3000	10000
62	Սեկնարկիչի հանում և տեղադրում	3000	8000
63	Սեկնարկիչի վերանորոգում	5000	10000
64	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000	7000


65	Վազբաշափի ճուղանի հանում և տեղադրում	4000	
66	Ազդանշանի հանում և տեղադրում	1000	2000
67	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	4000	8000
68	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	2000
69	Էլեկտրական տվիչների փոխարինում	2000	3000
70	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2000	2000
71	Վառոցքի մոմերի փոխարինում	1500	
72	Կոնդիցիոների լիցքավորում		
	11. Այլ ծառայություններ		
73	Ավտոմեքենայի լվացում	3000	3000
74	Անվաղողի վերանորոգում	1000	1000
75	Անիվի բայանսավորում	1000	1000
76	CO-զոդան աշխատանքներ, <i>զին 1 քառ.սմ - ի համար</i>	1000	1000
77	Խառատային աշխատանքներ	1000	1000
78	Փականագործի աշխատանքներ	1000	1000
79	Քարշարկի ծառայություն <i>զին 1կմ, համար</i>	500	500
	Ընդամենը	181600	272000
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱԶ 2106, ՎԱԶ-21214, ԳԱԶ 31101,	Նիսան Տեանա, Մեդսեդա-Բենց C280, Պեժո պարս
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2
	1.Շարժիչ		
1	Շարժիչի փական դուրս մղող	2400	6000
2	Շարժիչի փական ներս մղող	2400	6000
3	Շարժիչի փականի խցուկ	1200	2000
4	Ծնկածև լիսեռի խցուկ առջևի	1200	10000
5	Ծնկածև լիսեռի խցուկ հետևի	1200	10000
6	Ատամնանիվ	3600	12500
7	Յրիչ	1500	
8	Յիդրոիրիչ		12000
9	Բաշմակ	3000	10000
	2.Դեկավարման, սնման և յուղման համակարգ		
10	Յուղ շարժիչի հանքային, <i>1 լիտր</i>	3500	3500
11	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, <i>1 լիտր</i>	4000	4000
12	Յուղ շարժիչի սինթետիկ, <i>1 լիտր</i>	6000	6000
13	Յուղի գտիչ	1800	6000
14	Վառելանյութի գտիչ	1500	
15	Վառելանյութի փողրակ	2400	8000
16	Զերմաստիճանային տվիչ	2400	5000
17	Յուղի տվիչ	2400	5000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
18	Սառեցման հեղուկ <i>1 լիտր</i>	3600	3600
19	Յոլովակ		12000
20	Ծորակ	3000	8000
21	Խլարարի ներդիր	600	2400
22	Խլարարի կախոց	1200	2400
23	Անուր (խամուտ)	1000	1000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		

24	Կցորդման բանվորական գլան	7000	
25	Կցորդման գլխավոր գլան	9600	
26	Կցորդման տարվող սկավառակ	9000	
27	Կցորդման առանցքակալ	5000	
28	Կցորդման փողրակ	2400	
29	ՓՏ-ի առջևի խցուկ	1000	6000
30	ՓՏ-ի հետևի խցուկ	1200	6000
31	ՓՏ-ի առանցքակալ	4800	
32	ՓՏ-ի եղանիկ	3600	
33	Համաժամիչ	4800	
34	Մուֆտ	10000	
35	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1200	
36	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	2700	
37	ԱՓՏ յուղ, 1 լիտր		12000
38	Իերմետիկ	3000	3600
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
39	Էլաստիկ մուֆտ	5300	
40	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	4800	
41	Կարդանային լիսեռի խաչուկ	5000	
6. Առջևի և հետևի կամրջակներ			
42	Դիֆֆերենցիալի սատելլիտ	5000	
43	Տանող ատամնանիվի խցուկ	1200	
44	Տանող ատամնանիվի առանցքակալ	4800	
45	Դիֆֆերենցիալի առանցքակալ	4800	
46	Կիսատռու առանցքակալ	3600	
47	Կիսատռու խցուկ	1000	
7. Կախոց			
48	Անվակունդի խցուկ	600	
49	Անվակունդի ներքին առանցքակալ	2000	
50	Անվակունդի արտաքին առանցքակալ	2000	
51	Հարվածամեղմիչի վռան	600	
52	Ներքևի լծակի վռան	1000	
53	Վերևի լծակ	9600	
54	Վերևի լծակի վռան	1000	
55	Առջևի կայունարարի վռան	1200	6000
56	Հետևի մետաղաձող (շտանգա)	6000	
57	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	600	
58	Ծայրակալ	3600	
59	Զգան մեջտեղի	10000	
8. Դեկային մեխանիզմ			
60	ճոճանակ	6600	
61	ճոճանակի վռան	1000	
9. Արգելակային համակարգ			
62	Գլխ. գլան	9600	
63	Բանվ. գլան	3000	
64	Արգելակային փողրակ	2400	18000
65	Հետևի արգելակային թմբուկ	15000	
66	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2400	2400
10. Էլեկտրասարքավորում			
67	Ստարտերի ռելե	1600	12000
68	Ստարտերի ածուխ	4000	15000

69	Բեռներ	10000	30000
70	Լամպ	2400	6000
71	Էլեկտրական անջատիչ	2400	10000
72	Վառոցքային լարերի խուրջ	6600	
73	Վազքաչափի ճոպան	5300	
74	Ազդանշան	3600	12000
75	Սերկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>գին 1դ/մ վերանորոգման համար</i>	3600	3600
	Ընդամենը	268400	278000
	Ընդամենը SU1+SU2	450000	550000

<<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հովսեփյան

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)



«04» մարտի 2015թ.